



ԱՌՅՈՒԾԱԳԻ /Leonotis/

Առյուծագին կոչվում է նաև առյուծատունկ, սպիտափառ, սրտախոտ (լատ.՝ Leonotis), առյուծոտն: Խուլեղինջագգիների կամ շրթնաձաղկավորների ընտանիքին պատկանող բազմամյա խոտաբույսերի ցեղ: Հայտնի է 10-14, իսկ ՀՀ-ում՝ 2 տեսակ:

ԲՈՅՍԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ



Ցողունն ուղիղ է, վերին մասում՝ ճյուղավորված, քառանիստ, սնամեջ, ունի խավոտ գույն, բարձրությունը հասնում է 100-150սմ-ի: Տերևները հակադիր են, կոթունավոր, հիմքում՝ սրտաձև, ատամնաեզր, ցողունի ներքևի մասը՝ թաթաձև մասնատված, վերևի մասը՝ եռաբաժան կամ

եռթիականի: Ծաղկաբույլն ունի հասկի նմանություն, ծաղիկները՝ մանր, վարդագույն են: Ծաղկում է հունիս-սեպտեմբեր ամիսներին: Պտուղը քառընկուզիկ է: Աճում է աղբոտ տեղերում, տնամերձ հողամասերում, այգիներում, բանջարանոցներում: Բազմաճում է սերմերով՝ ինքնացան կամ ցանովի:

Ինչպես վերը նշել էինք ՀՀ-ում հանդիպում է առյուծագու 2 տեսակ

Առյուծագի սովորական (L.cardiaca)



Առյուծագի մեղրածուծային (L.marrubiastrum)



և

Առյուծագի սովորականը տարածված է բոլոր մարզերում, երկրորդը՝ Գեղարքունիքի մարզում: Աճում է անտառներում, բացատներում, թփուտներում, գետափերին, ճամփեզրերին և այլն:

Քիմիական բաղադրությունը

Առյուծագու քիմիական կազմը լրիվ ուսումնասիրված չէ: Սակայն հայտնի է, որ այն պարունակում է ալկալոիդներ (մինչև 0-4%), դաբաղանյութեր (5-9%), դառը նյութեր, եթերայուղ, շաքար, ֆլավոնոիդներ, ձյուր, և վիտամիններ, սապոնիններ, խնձորաթթու, կիտրոնաթթու, գինեթթու, ֆոսֆորաթթու: Բույսի հիմնական ազդող նյութերը համարվում են սապոնինները, ալկալոիդները, ֆլավոնոիդները և այլն:

Կիրառական նշանակություն

Դեղաբույս է

Օգտագործվում է սիրտանոթային ներոգների, կարդիոսկլերոզի, հիպերտոնիկ հիվանդության բուժման նպատակով: Ցողունների վերին մասերը,

ծաղիկները, տերևները պարունակում են ֆլավոնոիդներ, ադադանյութեր, սապոնիններ, եթերայուղեր, սերմերը՝ ճարպայուղ (օգտագործում են բարձրորակ լաքերի ստացման համար), բույսի վերգետնյա մասը՝ օգտագործում են մուգ կանաչ ներկանյութ ստանալու համար: Բույսից կարելի է ստանալ նաև մանրաթել: Մեղրատու է:

Բուժական նշանակություն

Բուժման նպատակով օգտագործում են բույսի տերևները և գլխամասերը, որոնք կտրում են մկրատով՝ 30-40սմ երկարությամբ, ծաղկման ժամանակ, չոր եղանակին: Չորացնում են կախած վիճակում, ստվերոտ տեղերում: Պատրաստի հումքի պիտանելիության ժամկետը 3 տարի է: Բժշկության մեջ առյուծագին օգտագործվում է նաև ստամոքսային հիվանդությունների բուժման ժամանակ և որպես քրտնամուղ, սրտխփոցների, ստամոքսային խանգարումների, շնչուղիների կատառի, սրտային հիվանդությունների, թիրեոտոքսիկոզի և ընկնաձորության (էպիլեպսիայի), հիսթերիայի, ներալգիայի, սրտային թուլության և շնչարգելության ժամանակ: Առյուծագու կիրառումից 69% դեպքերում ստացել են դրական արդյունք: Հարկավոր է նշել, որ անգամ տևական կիրառման դեպքում առյուծագու պատրաստուկները չեն տալիս կողմնակի, անցանկալի երևույթներ: Առյուծագին իր հանգստացնող ազդեցությամբ 3-4 անգամ գերազանցում է ինչպես կատվախոտին, այնպես էլ գարնանային շողավարդին: Բույսի հետևողական օգտագործումը լավ է ներգործում նաև այնպիսի հիվանդությունների բուժման ընթացքի վրա, ինչպիսիք են՝ աթերոսկլերոզը, կլիմակտերիկ ներոզը, գլաուկոման, մաշկային որոշ հիվանդություններ, իմպոտենցիան և այլն: Առյուծագին օժտված է նաև լեղամուղ հատկությամբ, կանոնավորում է լեղու արտահոսը, ստամոքսաաղիքային տրակտի ֆունկցիոնալ գործունեությանը (սպազմի և կոլիտների դեպքերում): Բույսը կոչել է սրտի բալասան:



ԴԵՂԱՏՈՄՍԵՐ

Միքտ-անոթային անբավարարություն, օրգանիզմն ամրացնող

Մանրացրեք, 2 ճ/գ չոր հումքը լցրեք 300 մլ եռացող ջրի մեջ, 2 ժամ թրմեք, քամեք: Խմել 50-ական մլ` օրը 3-4 անգամ, ուտելուց 15-20 րոպե առաջ:

Հիպերտոնիա, ստենոկարդիա, կարդիոնեռոզ, ներասթենիա

4ճ/գ հումքը 1 ժամ թրմել 200մլ եռացրած ջրում և քամել: Խմել 60մլ` օրը 2-3 անգամ, ուտելուց 1 ժամ առաջ:

Անքնություն, սիրտ-անոթային հիվանդություններ (նյարդային հոդի վրա)

1ճ/գ չոր հումքը 2 ժամ թրմել 200մլ եռացրած ջրում, կիպ փակված տարայի մեջ, հետո քամել: Խմեք 1ճ/գ, օրը 4 անգամ, ուտելուց 1 ժամ առաջ:

Աղեստամոքսային համակարգի հիվանդություններ, քրոնիկ կոլիտ, ստամոքսի սպազմեր

2ճ/գ հումքը լցնել 400մլ եռացող ջրի մեջ, 2-3ր անջատել կրակը, 8 ժամ թրմել, քամել: Խմել 50մլ` օրը 3 անգամ, ուտելուց 1-2 ժամ առաջ: Շարունակել 3 շաբաթ:

Բոլոր վերոգրյալ հիվանդությունների դեպքում օգնում է նաև առյուծագույն ոգեթուրմը.

20գ մանրացրած չոր հումքը 10օր թրմել 100մլ 70%-անոց սպիրտի մեջ, քամել: Խմել 30-40 կաթիլ` օրը 3 անգամ, 50մլ ջրի հետ:

Գլաուկոմա

Այս հիվանդության բուժման համար պետք է հավաքել հումքը բույսի ծաղկելուց անմիջապես հետո՝ սերմերի հետ: 1ճ/գ մանրացրած չոր խոտը սերմերի հետ, 8 ժամ թրմել 200մլ եռացրած ջրում, քամել: Խմել 50մլ՝ օրը 4 անգամ, ուտելուց 2 ժամ առաջ:

Գլխացավ

Խառնել հավասար քանակությամբ առյուծագու խոտ, կատվախոտի արմատ, չամանի և ռազիանի սերմեր: 2ճ/գ հումքը լցնել 200մլ եռացրած ջրի մեջ, 15ր տաքացնել ջրային բաղնիքի վրա (թույլ կրակ), 45ր թրմել, քամել: Վերականգնել նախնական ծավալը եռացրած ջրով: Խմել 100մլ՝ օրը 3 անգամ:

Ճնշումն իջեցնող

Խառնել հավասար քանակությամբ առյուծագու տերև, չորածաղիկի խոտ, ալոճենու ծաղիկ: 3ճ/գ հումքը 20ր թրմել 200մլ եռացրած ջրում, քամել: Խմել 60մլ, օրը 2 անգամ, ուտելուց 1-2 ժամ առաջ:

Ստենոկարդիա

Խառնել հավասար քանակությամբ առյուծագու խոտ և ալոճենու պտուղ: 4ճ/գ հումքը 8 ժամ թրմել 500մլ եռացրած ջրում, ջերմապահի մեջ, քամել: Խմել 100մլ՝ օրը 3 անգամ, ուտելուց կես ժամ առաջ:

Դաշտանի ուշացում

2 թ/գ չոր հումքն 8 ժամ թրմել 400մլ սառը (նախօրոք եռացրած) ջրում: Խմել 50մլ՝ օրը 3 անգամ՝ ուտելուց 30ր առաջ:

Մաքսողության խանգարում

Խառնել հավասար քանակությամբ առյուծագու խոտ, եղինջի և դադձի տերևներ: 3ճ/գ հումքը 1 ժամ թրմել 500մլ եռացրած ջրում, քամել: Խմել 100մլ՝ օրը 3 անգամ, ուտելուց 1 ժամ առաջ: Թուրմն ունի ստամոքսի աշխատանքը կարգավորող և ցավազրկող հատկություն: Կարելի է պահեք սառնարանում մինչև 2 օր:

Ոսկրացավ

1ճ/գ առյուծագու խոտը լցնել 500մլ եռացրած ջրի մեջ, եփել մինչև զանգվածը դառնա 300-350մլ, 30ր թրմել, քամել: Թուրմով շփել հիվանդ մասերը: Կատարել օրը 5-6 անգամ՝ 3-4 ժամ ընդմիջումներով:

Հակացուցված է



Հիպոտոնիայի և բրադիկարդիայի դեպքում:
Ոգեթուրմը հակացուցված է երեխաներին:

ԴԵՂԱՁԵՎԵՐ, ԿԻՐԱՌՄԱՆ ԵՂԱՆԱԿՆԵՐ

Առյուծագու խոտի թուրմ (Infusum herbae Leonuri)

Հումքի 15գ (4ճ/գ) տեղավորել էմալապատ ամանի մեջ, լցնել 200մլ եռացրած ջուր, կափարիչով փակել և 15ր տաքացնել ջրային բաղնիքի վրա՝ հաճախակի խառնելով, 45ր-ի ընթացքում սառեցնել սենյակային ջերմաստիճանում, ֆիլտրել, մնացած հումքը ճզմել: Ստացված թուրմի ծավալը եռացրած ջրով հասցնել 200մլ-ի: Ընդունել 1/3 բաժակ օրը 2 անգամ ուտելուց 1 ժամ առաջ:



Առյուծագու ոգեթուրմ (Tinctura Leonuri)



Առյուծագու ոգեթուրմը պետք է պատրաստել 70% սպիրտով 1÷5 հարաբերությամբ: Իրենից ներկայացնում է կանաչագորշավուն գույնի թափանցիկ հեղուկ՝ դառը համով և թույլ հոտով: Ընդունել 30-50 կաթիլ օրը 3-4 անգամ: Կատվախոտի կաթիլներից ուժեղ է ազդում:

Առյուծագու հեղուկ էքստրակտ - (Extractum Leonuri fluidum)

Գորշականաչավուն հեղուկ է՝ դառը համով և յուրօրինակ թույլ հոտով: Պատրաստում են 70% սպիրտով: Ընդունում են 15-20 կաթիլ օրը 3-4 անգամ:

Առյուծագու խոտի հյութը

Քամել թարմ խոտից, ընդուն 30-40 կաթիլ 2ճ/գ օրը մի քանի անգամ ուտելուց 30ր առաջ:

ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆԸ ԱՅԼ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐՈՒՄ

Սերմերից ստացված ճարպայուղը պիտանի է բարձրորակ լաքերի պատրաստման համար, ինչպես նաև թուղթը և գործվածքները անջրանցիկ դարձնելու նպատակով: Բույսից կարելի է ստանալ վուշին և չինական կանեփին որակով նման մանրաթել: Վերգետնյա մասը գործվածքները ներկում է մուգ կանաչավուն գույն: Անասնաբուժության մեջ առյուծագու խոտի թուրմը կիրառվում է որպես միզամուղ միջոց:

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՏԱՐԻ

Առյուծագին նախընտրում է բերքատու, դրենաժացված հողատարածքներ: Մշակման համար անհրաժեշտ է ընտրել անստվեր հողեր: Նպատակահարմար է ցանքսը կատարել շարքերով ձմռան շեմին՝ աշնանացան (հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին): Սերմերը ցանում են 1-2սմ խորությամբ: Գարնանացանքսի ժամանակ օգտագործում են շերտավորված սերմեր, ինչի համար դրանք խառնում են խոնավ գետային ավազի հետ 1÷3 հարաբերությամբ և ձմռանը պահում ձյան տակ 30-40 օր: Հողամասի մշակումը սկսվում է հողի փխրեցմամբ և մոլախոտի հեռացմամբ:

Այս հրատարակությունը (խմբագրությունը) ներկայացնում է <<Հայաստանի գյուղական համայնքներում ագրոկենսաբազմազանության պահպանության և օգտագործման միջոցով կենսաապայմանների բարելավում>> ծրագրի արդյունքների մի մասը: Գլոբալ էկոլոգիական Հիմնադրամի (ԳԷՀ) կողմից աջակցվող սույն ծրագիրը համակարգվում է Բիովերսիթի Ինթերնաշնալի (IPGRI) կողմից ՄԱԿ-ի շրջակա միջավայրի ծրագրի իրականացման աջակցությամբ (UNEP):